

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
YEREVAN STATE UNIVERSITY



# FOREIGN LANGUAGES FOR SPECIAL PURPOSES

№ 4 (13)

YEREVAN STATE UNIVERSITY PRESS  
YEREVAN 2016

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԸ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

№ 4 (13)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2016

**Recommended by the Scientific Council of the Department  
of Romance and Germanic Philology, Yerevan State University,  
Republic of Armenia**

- Editor-in-Chief:** **Margarita Apresyan**  
Head of ESP Chair N 1, PhD in Linguistics, professor, YSU, RA
- Honourable members of the editorial board:** **Dora Sakayan**  
Doctor of Philology, professor, McGill University, Canada
- Svetlana Ter-Minasova**  
Doctor of Philology, professor of Moscow State University,  
Dean of the Faculty of Foreign Languages,
- Hans Sauer**  
Doctor of Philology, Institute of English Philology, Munich  
University, Germany
- Charles Hall**  
PhD, associate professor of Applied Linguistics, University of  
Memphis, USA
- Editorial board:** **Samvel Abrahamyan**  
Dean of the Department of Romance and Germanic Philology,  
PhD in History, associate professor, YSU, RA
- Jura Gabrielyan**  
Doctor of Philology, professor  
Head of German Philology Chair, YSU, RA
- Karo Karapetyan**  
Head of Translation Chair,  
PhD in Pedagogics, professor, YSU, RA
- Albert Makaryan**  
Doctor of Philology, professor, YSU, RA
- Yelena Mkhitarian**  
Head of German languages Chair, PhD, professor, ASPU, RA,
- Hasmik Bagdasaryan**  
Head of Romance Philology Chair, PhD, associate professor

Foreign Languages for Special Purposes, Yerevan, Yerevan State University Press, 2016, p. 176.

FLSP international journal, published once a year, is a collection of scientific articles presented by FLSP practitioners inside and out Armenia targeting at professional experience exchange and concurrent development of FLSP methodologies.

Letters and articles for publishing should be sent to the editor-in-chief

E-mail: [english@ysu.am](mailto:english@ysu.am), [margaret.apresyan@mail.ru](mailto:margaret.apresyan@mail.ru)

© Apresyan, M. and others, 2016

© YSU press, 2016

**Հրատարակության և երաշխավորել  
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի  
գիտական խորհուրդը**

**Գլխավոր խմբագիր՝**

**Մարգարիտա Ապրեյան**

ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ, բան.  
գիտ. թեկն., պրոֆեսոր

**Խմբագրական  
խորհրդի**

**Դորա Մաքսյան**

բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

**պատվավոր անդամներ՝**

Մթզիլ համալսարան, Մոնրեալ, Կանադա

**Սվետլանա Տեր-Մինասովա**

Բան. գիտ. դոկտ.,

Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր,

Օտար լեզուների ֆակուլտետի դեկան,

**Հանս Մաուեր**

Բան. գիտ. դոկտ., պրոֆեսոր

Անգլիական բանասիրության ինստիտուտ, Մյունխենի  
համալսարան

**Չարլզ Հոուլ**

բ.գ.թ., կրտսեր պրոֆեսոր, Մեմֆիսի համալսարան, ԱՄՆ

**Խմբագրակազմ՝**

**Սամվել Աբրահամյան**

ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի  
դեկան, պատմ. գիտ. թեկն., դոցենտ

**Յուրա Գաբրիելյան**

ԵՊՀ գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ,

բ.գ.դ., պրոֆեսոր

**Կարո Կարապետյան**

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի  
վարիչ, մանկ. գիտ. թեկն., պրոֆեսոր

**Ալբերտ Սակարյան**

բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ

**Ելենա Միխայրյան**

ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի վարիչ,

բան. գիտ. թեկն., պրոֆեսոր

**Համիկ Բաղդասարյան**

Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ

Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար, Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 176 էջ:

Գիտական հոդվածների միջազգային ամսագիրը նպատակ ունի հավաքելու և ներկայացնելու Հայաստանի և Հայաստանից դուրս «Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար» (FLSP) ոլորտի մասնագետների մշակած ժամանակակից մեթոդները փորձի փոխանակման և դրանց հետագա զարգացման նպատակով:

© Ապրեյան Մ. և ուրիշ., 2016

© ԵՊՀ հրատ., 2016

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

|   |    |
|---|----|
| <b>Avagyan N., Bagiryan D., Melkonyan R.</b><br>THE ROLE OF EDUCATIONAL APPS IN LANGUAGE TEACHING AND<br>LEARNING PROCESSES .....   | 8  |
| <b>Avetikian M.</b><br>TEACHING FOREIGN LANGUAGE FOR SPECIFIC PURPOSES:<br>TEACHER DEVELOPMENT .....  | 18 |
| <b>Абрамян С.</b><br>ЛИНГВОКУЛЬТУРНЫЕ ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО<br>АНГЛОЯЗЫЧНОГО ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА .....  | 30 |
| <b>Амирян Н.</b><br>ОСОБЕННОСТИ ФУНКЦИОНИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКИХ<br>ЭВФЕМИЗМОВ В СМИ ПРИ ОСВЕЩЕНИИ ЧЕТЫРЕХДНЕВНОЙ<br>ВОЙНЫ В НАГОРНОМ КАРАБАХЕ .....   | 41 |
| <b>Сидоренко Т., Рыбушкина С., Апресян М., Багирян Д.</b><br>ИНТЕГРАЦИЯ ПРЕДМЕТНО-ЯЗЫКОВОГО ОБУЧЕНИЯ В<br>КОНТЕКСТЕ СТРАТЕГИЙ ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИИ ВУЗОВ<br>ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА<br>(НА ПРИМЕРЕ РОССИИ И АРМЕНИИ) ..... | 50 |
| <b>Тер-Саргсян Л.</b><br>ПЕРЕВОД КАК КЛЮЧ К ПОНИМАНИЮ НАУЧНОГО<br>ЭКОНОМИЧЕСКОГО ТЕКСТА .....   | 67 |
| <b>ԱԹՈՅԱՆ Լ.</b><br>ԹԵՍՄԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ<br>ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ ՀՀ-ՈՒՄ .....   | 78 |

**Ապրեսյան Մ., Գյուլգառյան Դ., Տեր-Սարգսյան Լ.**  
ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ  
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ..... 89

**Գրիգորյան Շ.**  
ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ  
ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ..... 101

**Մարտիրոսյան Մ.**  
«ՀԱՄՈՂՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ..... 111

**Մինասյան Է.**  
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ  
ՄԱՄՈՒԼՈՒՄ ..... 120

**Սարգսյան Լ.**  
ՏԵՔՍՏԻ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ  
ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ ..... 134

**Ոսկանյան Ա.**  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ..... 149

**Սարգսյան Լ.**  
ԼԵԶՎԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ  
ԴԻՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ ..... 162

## **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

### **ABSTRACT**

#### **THE PECULIARITIES OF THE SELECTION AND TEACHING OF LEGAL TEXTS IN ESP**

The article focuses on some of the challenges of teaching juridical sublanguage of English through reading professionally-oriented texts. It highlights the importance of the main content, cultural background and functional characteristics of juridical texts, discourses, creolized texts and virtual discourses to be used for teaching purposes as authentic material. The principles of the selection and teaching of legal authentic texts are targeted and analyzed within an ESP academic environment. Teaching conditions, individual characteristics of the students, stylistic and genre characteristics of juridical English are considered.

*Key words:* legal texts, intercultural communication, discourse.

### **РЕЗЮМЕ**

#### **ОСОБЕННОСТИ ОТБОРА И ПРЕПОДАВАНИЯ ЮРИДИЧЕСКИХ ТЕКСТОВ В ESP**

В статье рассматривается проблема обучения юридическому подязыку английского языка посредством чтения профессионально-ориентированных текстов. Представлены основные содержательные и функциональные характеристики юридических текстов, дискурсов, креолизованных текстов и виртуальных дискурсов, которые используются в учебных целях в качестве аутентичного материала. Определены принципы отбора учебных и аутентичных текстов с точки зрения условий обучения, индивидуальных характеристик состава студентов, стилистических и жанровых характеристик английского юридического подязыка.

*Ключевые слова:* юридический текст, дискурс, межкультурная коммуникация.



## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը դիտարկում է իրավաբանական տեքստի ընտրության և ուսուցման սկզբունքներն ու առանձնահատկությունները ESP դասընթացում: Ներկայացված են ուսումնական նպատակներով որպես բնագիր օգտագործվող իրավաբանական տեքստի, խոսույթի, կրեոլ տեքստի և վիրտուալ խոսույթի բովանդակային, միջմշակութային և գործաբանական առանձնահատկությունները:

***Բանալի բառեր՝** իրավաբանական տեքստ, խոսույթ, միջմշակութային հաղորդակցություն:*

Իրավաբանական կողմնորոշման անզլերենի ենթալեզվի ուսուցման դասընթացը նախագծելիս, անհրաժեշտ է իրականացնել ուսումնական և բնագրային տեքստերի ընտրություն, հաշվի առնելով դրանց բովանդակությունն ու մշակութային հենքը, ինչպես նաև ուսանողների նախասիրությունները, դրդապատճառային ուղղվածությունը, տարիքը, հետաքրքրությունները, իմացական, մասնագիտական պահանջմունքները և այլն:

Հաշվի առնելով միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման առանձնահատկությունները, խնդիր է դրվում հստակորեն դասակարգել իրավաբանական տեքստերի ընտրության սկզբունքները: Միջմշակութային հաղորդակցության համատեքստում առաջին պլան են մղվում անզլերեն իրավաբանական տեքստերի ընտրության և դրանց միջոցով բառապաշարի ուսուցման գործաբանական, հաղորդակցական, ճանաչողական, խոսութային մոտեցումները:

Գործաբանական մոտեցումը լայն հասկացություն է: Այն նախ և առաջ վերաբերում է լեզվակիրների հաղորդակցական վարքագծին, դրա բովանդակությանը: Ինչպես նշում են սույն հիմնախնդրի հետազոտողները, սովորողները պետք է յուրացնեն ուսումնասիրվող լեզվով հաղորդակցվողների շփման նորմերը, ավանդույթները, սովորույթները, որպեսզի գործաբանական մակարդակում պատրաստ լինեն շփվելու

լեզվակիրների հետ (Miloserdova, 2004: 85): Այստեղ անհրաժեշտ է տարբերակել անգլալեզու մարդկանց և անգլալեզու իրավաբանների հաղորդակցական նորմերը գործաբանական մոտեցման տեսանկյունից:

Ինչպես հայտնի է, «գործաբանական իրազեկությունը (Pragmatic competence) առնչվում է լեզվական պաշարների գործառական կիրառմանը (լեզվական գործառույթի իրագործում, խոսքային ակտ)՝ հաղորդակցական փոխներգործության մեխանիզմներին համապատասխան: Այն առնչվում է նաև խոսույթի ստեղծման կարողություններին, տեքստի կապակցվածությանը (cohesion) և իմաստային կապին (coherence), տեքստի տեսակների ու ձևերի ճանաչմանը, հեզնանքին ու նմանակմանը» (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, 2005: 117-125):

Փաստորեն, խնդիր է դրվում ուսումնասիրել լեզվակիր իրավաբանների, իրավագետների հաղորդակցական վարքագծի նորմերը, այն սովորույթները, որոնք գերակշռող են անգլալեզու իրավաբանների շրջանում:

Դատաիրավական տեքստերն ուսուցողական նպատակներով ընտրելիս, խնդիր է դրվում բացահայտել հեղինակների՝ իրավագետների, իրավաբանների, փաստաբանների անձնային և մասնագիտական որակները:

Իրավաբանական տեքստերի ընթերցանությամբ անհրաժեշտ է ընդհանուր պատկերացում կազմել անգլալեզու իրավաբանների, իրավագետների խոսքային, ինչպես նաև ոչ խոսքային վարքագծի մասին, բացահայտել նորմերը և շեղումները:

Մեթոդիստները խնդիր են դնում մասնագիտական կողմնորոշման տեքստերի ընթերցանությամբ հիմք դնել ոչ միայն սովորողների գործաբանական իրազեկության զարգացմանը, այլև նպաստել հեշտությամբ հաղթահարելու գործաբանական փոխներթափանցման դեպքերը:

Հետազոտողները առանձնացնում են գործաբանության երկու հայեցակերպ՝ հասարակական և ճանաչողական: Հասարակական գոր-

ծաբանությունը ապահովում է հաղորդակցական վարքագծի նկարագրությունը, իսկ ճանաչողական գործաբանությունը բացատրում է «ինչպես է այս կամ այն վարքագիծը ձևավորվել» հնարավոր ճանաչողական մեխանիզմներով» (Blakemore, 1992: 47):

Գործաբանական գիտելիքների փոխազդեցության, փոխներթափանցման դրսևորումները դիտարկվում են նախ և առաջ միջմշակութային հաղորդակցության համատեքստում (Kotthoff, 2006: 271-304):

Գործաբանական փոխներթափանցման դրսևորումները անհրաժեշտ է հաշվի առնել անգլերեն դատախրավական ենթալեզվի տարբեր շերտերը ուսուցման առարկա դարձնելիս:

Անգլերեն իրավաբանական տեքստեր ընթերցելիս, խնդիր է դրվում նաև ուսումնասիրել լեզվակիր իրավաբանների, իրավագետների վարքի, վարքագծի նորմերը: Այդ տեսանկյունից դատախրավական տեքստերի ընտրությունը դժվարություն է ներկայացնում, քանի որ տեքստերի ընթերցանությամբ բացահայտել տվյալ ոլորտի տեքստերը ստեղծողների անձնային, հոգեբանական, մասնագիտական որակները շատ դժվար է:

Ուսուցողական նպատակներով անհրաժեշտ է ընտրել այնպիսի տեքստեր, որոնք ներկայացնում են ոչ միայն անգլիացի, այլև հայախոս իրավաբանների, իրավագետների խոսքային և ոչ խոսքային վարքագծի նորմերը: Ըստ Ն. Ն. Տրոշինայի՝ միջմշակութային հաղորդակցությունը դժվարագույն հաղորդակցական գործընթաց է: Այդ գործընթացը փոխընկալման և մերձեցման յուրահատուկ դրսևորում է, որի հաջող իրականացման համար անհրաժեշտ է գիտակցել նրա բաղադրամասերը և ոչ թե բացահայտել տվյալ մշակույթի չափանիշները (Трошина, 2002: 61-77):

Բովանդակային նոր բնութագրեր է ձեռք բերում իրավաբանական լեզուն նշանաբանական մոտեցման տեսանկյունից: Լ. Ա. Շեյգալը իրավաբանական լեզուն մեկնաբանում է որպես «նշանաբանական տիրույթ ձևավորող իրավաբանական խոսույթի նշանների կազմավորված ամբողջականություն» (Шейгал, 2000: 368): Այդ առումով կարևորվում են

կրեոլ կամ բարդ տեքստերը:

Լստ Յու. Ա. Սորոկինի՝ կրեոլացված են այն տեքստերը, «որոնց ֆակտուրան բաղկացած է երկու ոչ համասեռ մասից՝ խոսքային և ոչ խոսքային, որը պատկանում է այլ նշանային համակարգի, ի տարբերություն բնական լեզվի (Сорокин, Тарасов, 1990: 227): Ներկայումս պատկերներով համակցված տեքստեր կարելի է գտնել շատ արագ՝ համացանցի միջոցով: Այդ առումով, ուսուցման տեսանկյունից արդյունավետ են անգլիացի հայտնի իրավագետների կյանքին ու գործունեությանը վերաբերող կրեոլ, պատկերազարդ տեքստերը, որոնք ուղեկցվում են լուսանկարներով, ծննդյան, ուսումնառության, բնակավայրերի, գործունեություն ծավալած դատարանի պատկերներով և այլն: Այդպիսի տեքստերը օգնում են ուսանողներին հաղթահարել միջմշակութային, մշակութային փոխներթափանցում առաջ բերող դժվարությունները: Ուսանողները այդպիսի տեքստերի միջոցով յուրացնում են թե՛ իրավաբանական առարկա-իրույթները, թե՛ բառ-իրույթները:

Միջմշակութային հաղորդակցման ուսուցման կարևոր պայման է օտարալեզու իրավաբանական խոսույթի հետ աշխատանքը: Դրա համար անհրաժեշտ է տարբերակել իրավաբանական խոսույթի հիմնական ժանրերը և տեքստերն ընտրել ըստ այդ ժանրերի:

Տ. Վ. Անիսիմովան առանձնացնում է իրավաբանական խոսույթի գրավոր ժանրերը՝ օրենսդրական տեքստ, պայմանագիր, դատախարական համակարգի հետ կապված փաստաթղթերը /դատական որոշում, բողոքարկում, գործ և այլն/, ֆիզիկական և իրավաբանական անձերի փաստաթղթերը՝ վկայական, անձնագիր, արտոնագրում, կարգ և այլն/ իրավաբանական լրագրություն, իրավական դոկտրինա, այսինքն՝ գիտական տեքստ, բանավոր ժանրեր, իրավաբանական խորհրդատվություն, դատական խոսք, ճառ /դատարանում մեղադրյալի/փաստաբանի ելույթը, երդման բերելը, վկաների հարցումը/, ոստիկանության հարցաքննությունը (Анисимова, 2000: 417):

Ակնհայտ է, որ նշված ժանրերով տեքստերի ընթերցանությունը միջմշակութային բնույթի դժվարություններ է պարունակում: Խնդիրն

այն է, թե ուսուցման որ փուլում ինչ ժանրերով անգլերեն իրավաբանական տեքստեր ուսումնասիրել: Հատկապես արդյունավետ է իրավաբանական խոսույթի հետ իրավաբանական բառապաշարի ուսուցմանը միտված աշխատանքը, քանի որ խոսույթը լինելով հարաշարժ և իրադրային, ուսուցողական նպատակներով կիրառելիս նպաստում է նոր ուսումնական, պրոբլեմային իրադրությունների ստեղծմանը, լեզվակիրներին բնորոշ խոսքային իրադրությունների կաղապարմանը: Այդ առումով կարելի է առանձնացնել Մ. Գ. Յերցվաձեի մոտեցումը, ըստ որի՝ «խոսքային գործունեության տեսության շրջանակներում առանձնացնում են երկու հայեցակետ՝ խոսույթի ստեղծումը և սերումը /կշռադատում, պլանավորում, խոսելը, գրավոր ձևակերպումը/, և խոսույթը հասկանալը /ունկնդրում, գրավոր տեքստի ընկալում, վերլուծություն և մեկնաբանություն/» (Цервадзе, 2011: 163-168):

Միջմշակույթային հաղորդակցման հմտությունների զարգացման տեսանկյունից կարևոր է այն, որ իրավաբանական խոսույթը ներառում է իրավունքի հասկացությունների լայն սպեկտր՝ ապացույց, արժանապատվություն, ճշմարտություն, հայցադիմում, մեղք, օրենք, գրպարտանք, իրավունք, արդարադատություն, արժանապատվություն, վկա, դատ, պատիվ, դատավճիռ և այլն:

Լեզվաբանները, իրավաբանական տեքստի բովանդակության վերլուծությամբ, առանձնացնում են իրավաբանական խոսույթի հետևյալ նպատակները՝ տեղեկատվական, վերլուծական, գնահատող, ներագող, կանխատեսող, որոնք արտահայտվում են ինչպես explicit, այնպես էլ implicit միջոցներով:

Կարևոր դիտարկում է այն, որ իրավաբանական խոսույթը գերակա դիրք է գրավում կենցաղային խոսույթի նկատմամբ: Իրավաբանական տեքստը ստեղծվում է արդեն գոյություն ունեցող տեքստերի հիման վրա:

Իրավաբանական տեքստերի ընտրության կարևոր պայման է տեքստը խոսույթի մակարդակում դիտարկելը: Դա նշանակում է, որ «տեքստ» հասկացությունը դիտարկվում է իր լայն իմաստով՝ որպես

շարունակաբար զարգացող մակրոտեքստ: Այդ տեսանկյունից կարևորվում են նեղ մասնագիտական իրավաբանական, իրավական, իրավատնտեսական տեքստերը:

Իրավաբանական տեքստերի վերլուծական ընթերցանությամբ, ապագա իրավաբանները կարող են ընդհանուր պատկերացում կազմել իրավական ոլորտում հաղորդակցության մասին:

Իրավաբանական տեքստերի ուսուցման գործընթացում մեծ նշանակություն ունեն ճարտասանական տեքստերը, քանի որ իրավական ոլորտը հնարավոր չէ ամբողջական ներկայացնել առանց դրանց հետևողական ուսումնասիրման: Ցանկացած համաժողով, դատական նիստ, դատավորների, հաշտարարների, երդվյալ ատենակալների հանդիպում պարունակում է ճարտասանական արվեստի տարրեր:

Գիտենալով և տարբեր ուսումնադերային վիճակներում խաղարկելով ճարտասանական ելույթի տեսակները՝ ուսանողները ոչ միայն նոր բռնապաշար են յուրացնում, այլև սկսում են հնարավորինս ճիշտ պատկերացում կազմել լեզվակիր իրավագետների, իրավաբանների մտածելակերպի, ազգամշակութային կարծրատիպերի, հաղորդակցական լեզվակաղապարների մասին (Пригарина, 2009: 181-184):

Ըստ Ն. Կ. Պրիգարինայի՝ դատական խոսքին բնորոշ է հռետորի և ունկնդիրների միջև հեռավորության հաղթահարումը: Դրան հասնում են դերանվանական նշույթների կիրառմամբ (*we all, together with you / Now, we all know that the killer cut his left hand because we have the blood drops to the left side of the bloody shoe prints/*).

Ն. Կ. Պրիգարինան ցույց է տալիս, որ հռետոր-դատախազը կամ մեղադրող կողմը տարբեր հնարներ է կիրառում դատական ընթացակարգում տեղ գտած թեժ պայքարը, հակադրվող կողմերի հակամարտությունը ցույց տալու համար: Այսպիսով՝ հռետոր-դատախազը կիրառում է պայքարի և օտարացման տարբեր ձևեր՝ ընթացակարգային, ինստիտուցիոնալ, մտավոր, տերիտորիալ-կարգավիճակային: Կոնկրետ օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ ապագա իրավաբանները ծանոթանալով անգլախոս իրավաբանների ճարտասանական

հնարներին, կկարողանան ոչ միայն հասկանալ իրավաբանական բնույթի ճարտասանական տեքստերը, այլև թարգմանել և վերարտադրել: Ստորև տրվում են Ն. Կ. Պրիգարինայի կողմից առանձնացված տիպական օրինակները: Նա առանձնացնում է պայքարի և օտարացման հետևյալ ընթացակարգային ձևերը՝

Them versus Us - Նրանք մեր դեմ են: Օրինակ՝ ... Trial lawyers, brought in from Denver, Colorado, to represent these people against our common person, Kim Pring, who stood up to the evil empire : Հեղինակը մեկնաբանում է տվյալ օրինակը հետևյալ կերպ՝ «դատախազի և պաշտպանողի միջև մեծ տարբերություն կա: Դատախազի հետևում լուռ, սառն ու անհողողող օրենքն է, իսկ պաշտպանողի հետևում կենդանի մարդիկ են»:

Հետաքրքիր են նաև իրավաբանական ճարտասանական տեքստի խոսույթաստեղծ ներուժի տեսանկյունից հանդես եկող ինստիտուցիոնալ հնարները՝

VIP people versus little people - «ՎԻՊ» մարդիկ հասարակ մարդկանց դեմ: Հեղինակը մեկնաբանում է «A great part of the case, folk, is the pain and the misery and the anger that ordinary people and I feel against big guys from big cities to judge us» նախադասությունը հետևյալ կերպ՝ «Մյուս կողմից ուժեղներին չի կարելի մեղադրել առանց հիմքի»:

Պաշտպանական խոսքի տիպական հնարներից են մտավոր և տերիտորիալ-կարգավիճակային հնարները՝

- մտավոր (fancy people versus common people - խելոքները սովորական մարդկանց դեմ. համեմատեցեք՝ ... they aren't proven or disproven by fancy people that come from Stanford University to tell you and me how to think or how we read.

- տերիտորիալ-կարգավիճակային (city boys versus farm boys – քաղաքացիները գյուղաբնակների դեմ. համեմատեցեք՝ Are we talking about farm boys like Eddie and me and city boys like Mr. Guccione? Մեր երկիրը բազմացեղ է: Ոչ բոլոր ազգություններն են, դժբախտաբար, օգտվում նույն իրավունքներից: Նրա ցեղը, կամա, թե ականա քավում է

այլոց մեղքերը:

Պաշտպանական խոսքը ուսուցողական նպատակներով կիրառելիս, ուսանողները յուրացնում են լեզվակիր իրավաբաններին բնորոշ խոսքային հնարները, որոնք ոչ միշտ են համընկնում հայերենին: Օրինակ, անգլիացիները օգտագործում են սպրումակցման հնարը՝

I greatly sympathize with..., I really feel for you..., I share in your sorrow..., I have nothing but pity in my heart for the witness...

Թարգմանությունը ցույց է տալիս, որ հայերենին բնորոշ են լրիվ այլ խոսքային վարվեցողության, զգայական բառեր և բառակապակցություններ: Անգլախոս իրավաբանները ճարտասանելիս գործածում են տարբեր բառակապակցություններ, որոնք դժվարություն են ներկայացնում նախ և առաջ միջմշակութային հաղորդակցման տեսանկյունից: Օրինակ՝

Not everybody, not everybody wants to live up to the law or follow the law. Not everybody thinks that the law applies to them. No one is above the law; not the police, not the rich, no one. O.J. Simpson isn't above the law.

Հիմնականում նրանք նախընտրում են գործածել ոչ միայն խոսքի սկիզբը ներկայացնող բառեր և բառակապակցություններ (to commence with, opening the debates, as a primary consideration etc), այլև ընթացակարգային (first, second, last etc.), կամ՝ հակասական՝ (in direct contradiction, on the contrary, doubtful, illogical, ambiguous etc.), հակադրական (in comparison to, although, even though, in spite of the fact that, despite the fact that, nevertheless etc.), վերաբերական (referring to, to remind, don't forget, appealing to etc.), լրացական (besides, in addition, to add etc.), - նպատակային (finally, to conclude, summing up etc.) և այլ բառեր և կապակցություններ:

Իրավաբանական տեքստերն ուսուցողական նպատակով ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել նշված բառերի և բառակապակցությունների թարգմանության, յուրացման առանձնահատկությունները և ակտիվ խոսքում կիրառելու հնարավորությունները:

Ինչ վերաբերում է բանավոր իրավաբանական խոսույթին, ապա



դրանք ներառում են հատվածներ բանակցություններից, իրավաբանական բնույթի խոսակցություններից, փաստաբանական գործունեությունից, իրավական տեքստերից: Այդպիսի խոսույթներում կիրառվում են ինչպես նշութավորված, այնպես էլ ոչ նշութավորված կադապարային դարձվածներ:

Խոսույթը տարբեր սահմանումներ ունի: «Այն կապակցված տեքստ է, որն ամբողջանում է արտալեզվաբանական /գործաբանական, հանրալեզվաբանական և հոգեբանական գործոններով (Арутюнова, 1990: 136-137): Ուսուցողական նպատակներով իրավաբանական խոսույթը կիրառելիս, անհրաժեշտ է բացահայտել դրա ժանրային առանձնահատկությունները:

Գիտնականներն առանձնացնում են իրավաբանական խոսույթի գրավոր ժանրերը՝ օրենսդրական տեքստը, պայմանագիրը, դատավարության հետ կապված փաստաթղթերը /դատական որոշում՝ legal authority, authority, judicial award, cognition, legal judgment, judgment, judicial decision, decree of the court, decree, court holding, holding, բողոքարկում՝ appeal case, petition of appeal, դատական նիստի արձանագրություն՝ court record(s), գործ՝ case և այլն/, ֆիզիկական և իրավաբանական անձանց փաստաթղթերը /վկայական՝ certificate, անձնագիր՝ passport, արտոնագիր՝ permit, license , կտակ՝ (last) will; testament, կանոնակարգ՝ charter, article, (ընկերության) by-laws, by-law, constitution, manual, standing orders, regulation/, իրավաբանական հրապարակախոսություն՝ juridical journalism, իրավական դոկտրինա՝ legal doctrine և գիտական տեքստը, ինչպես նաև բանավոր ժանրերը՝ իրավաբանական խորհրդատվություն՝ legal counseling, դատական խոսք՝ pleadings, մեղադրողի ելույթը դատարանում՝ prosecutor's speech in court, երդման բերելը՝ adjuration, administration of the oath, վկաների քննում՝ hearing of witnesses, երդվյալ դատավորների գործի ծանոթացում՝ country, lay people, fact triers direction, դատավճիռ՝ sentence, verdict, ոստիկանական քննություն՝ police interrogation:

Ինչպես նշում է Լ. Ա. Բորիսովան, «անգլերեն իրավաբանական

խոսույթում իրավական տեքստը ներկայացված է այնպիսի տարատեսակներով, ինչպիսին են հոդվածը, կանոնադրությունը /statute/ և լիազորված օրենսդրությունը /delegated legislation/ (Борисова, 2010: 16):

Ըստ նույն հեղինակի՝ «Ժանրերի ենթահամակարգում կենտրոնական տեղ է զբաղում հանրային հոդվածը: Միջմշակութային հաղորդակցման տեսանկյունից կարևորվում են իրավական հոդվածներում կիրառվող տերմինները և հասկացությունները (Борисова, 2010:17): Մասնագիտական կողմնորոշման իրավաբանական բնույթի բնագրային տեքստերի ընտրությունը կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

- բնագրային իրավաբանական տեքստը պետք է լինի մատչելի, հետաքրքիր, տեղեկատվական առումով բազմաբնույթ և արդիական, մասնագիտական առումով բովանդակալից,
- պետք է իրականացնի կրթադաստիարակչական և տեղեկատվական, ճանաչողական և վերճանաչողական գործառույթներ,
- պետք է ներկայացնի անգլախոս իրավաբանների մասնագիտական գործունեության և կենսակերպի, կենցաղավարության առանձնահատկությունները, մշակութային, ներմշակութային, միջմշակութային բնույթի իրողությունները, ինչպես նաև գործաբանական բնույթի իրակությունները:

Արդյունավետ է իրավաբանական հիպերտեքստերը կիրառել որպես անգլերենի ուսուցման միջոց: Ինչպես հայտնի է, հիպերտեքստերը կառուցվածքային առումով գծային չեն և ներառում են իրար հետ չհատվող տեղեկատվական աղբյուրներ, ընդ որում՝ դրանց միջև կարող են հաստատվել խաչաձև հղումներ (Шехтман, 2005: 74-85):

Միջմշակութային հաղորդակցության ուսուցման գործընթացում հիպերտեքստերը բազմագործառույթ են: Նրանք փոխում են հասցեագրող - հասցեատեր, հաղորդող - ընդունող, հեղինակ - ընթերցող հարաբերությունների դինամիկան: Կարևոր է այն, որ հիպերտեքստերի միջոցով հնարավոր է անսահման քանակությամբ տեքստեր ներմուծել՝ դրանով իսկ կիրառվել մշակութային, մասնագիտական բնույթի բացերը

լրացնելու համար: Ընդ որում՝ համակարգչային, տեղեկատվական տեխնոլոգիայի կիրառմամբ տեղեկատվության որոնումը շատ արագ է իրականացվում: Մյուս առավելությունն այն է, որ ընթերցողն իր որոնողական աշխատանքում ազատ է և միշտ ունի որոշում ընդունելու այլընտրանք (Smoliar, 1983: 34-36):

Ուսանողների միջմշակութային հմտությունների զարգացման տեսանկյունից կարևորվում է հատկապես վիրտուալ խոսույթի կիրառումն ուսուցման գործընթացում, քանի որ այն հնարավորություն է տալիս օգտվել համացանցային հաղորդակցության առավելություններից:

Վիրտուալ խոսույթի ուսումնական նպատակներով կիրառումը հնարավորություն է ընձեռում զարգացնել ուսումնական և արտասուսումնական պայմաններում ուսանողների մենախոսական և երկխոսական խոսքը: Ինչպես նշում է Ե. Ն. Գալիչկինան. «Համակարգչային հաղորդակցության առանձնահատկությունն այն է, որ կիրառվում են ոչ միայն մասնագիտական եզրեր, այլև այնպիսի բառամիավորներ, որոնք վերաբերում են տարբեր ոճերի և ռեգիստրերի, որոնք կազմավորվում են համաձայն համակարգչային ցանցի գործաբանական դիրքորոշումների և շփման նպատակների» (Галичкина, 2001: 19):

Այսպիսով՝ իրավաբանական կողմնորոշման անզլերենի ենթալեզվի ուսուցման դասընթացում տեքստերն ընտրելիս, հաշվի են առնվում տարբեր գործոններ՝ ուսանողների մասնագիտական պահանջմունքները և նախասիրությունները, անզլոամերիկյան և հայրենական իրավական ավանդույթների նմանությունները և տարբերությունները, ժամանակակից անզլերեն բառապաշարի յուրահատկությունները, տեքստերի, խոսույթների, կրեոլ տեքստերի, հիպերտեքստերի, վիրտուալ տեքստերի ոճաժանրային առանձնահատկությունները, ինչպես նաև սովյալ դասընթացի նախագծման և կազմակերպման մանկավարժական պայմանները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Miloserdova E.V.** (2004), National Cultural Stereotypes and Problems of Intercultural Communication. Foreign Languages at School, p. 85
2. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, 2005, էջ 117-125:
3. **Blakemore D.** (1992), Understanding Utterances: An Introduction to Pragmatics. Oxford, p.47
4. **Kotthoff H.** (2006), Pragmatics of Performance and the Analysis of Conversational Humor., pp. 271-304
5. **Трошина Н.Н.** (2002), Лингвопрагматический аспект межкультурной коммуникации в исследованиях Ренаты Ратмайр // ЭРЖЕ, с. 61-77.
6. **Шейгал Е. И.** (2000), Семиотика политического дискурса: Монография / Ин-т языкознания РАН; Волгогр. гос. пед. ун-т. – Волгоград: Перемена, 368 с.
7. **Сорокин Ю.А., Тарасов Е.Ф.** (1990), Креолизованные тексты и их коммуникативная функция [текст] / Ю.А.Сорокин, Е.Ф.Тарасов - М.: Наука, 227с.
8. **Анисимова, Т.В.** (2000), Типология жанров деловой речи: риторический аспект : дис. ... д-ра филол. наук : 10.02.19 / Т.В. Анисимова. - Краснодар, 417 с.
9. **Церцвадзе М. Г.** (2011), Проблема изучения юридического дискурса в современной лингвистике: Юрислингвистика. № 11. С. 163-168.
10. **Пригарина Н.К.** (2009), Риторические параметры жанра судебной речи в практике русских и англоговорящих судебных ораторов. [Текст] / Н.К. Пригарина // Вестник Московского государственного областного университета. – Серия "Лингвистика".– 2009. – № 3. – М.: Изд-во МГОУ, С.181-184. [www.vestnik-mgou.ru/mag/2009/ling/3/st39.pdf](http://www.vestnik-mgou.ru/mag/2009/ling/3/st39.pdf):
11. **Арутюнова Н. Д.** (1990), Дискурс // Лингвистический энциклопедический словарь. М.: Советская энциклопедия, С. 136-137.
12. **Борисова, Л. А.** (2010), Композиция и языковые особенности статута как поджанра в англоязычном юридическом дискурсе: к. ф. н., 212
13. **Шехтман, Н. А.** (2005), Понимание речевого произведения и гипертекст / Н.А. Шехтман. – Оренбург: Изд-во ОГПУ, 168 с.
14. **Stephen W., Smoliar** (1983), Review of “Literary Machines” by Ted Nelson, pp.34-36
15. **Галичкина Е. Н.** (2001), Специфика компьютерного дискурса на английском и русском языках (на материале жанра компьютерных конференций) / Е. Н. Галичкина // Автореф. дис. ... канд. филол. наук. - Волгоград, 19 с.